ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՎԱԱՏ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան 06.09.2019թ.

ժամը
12:00

Հանձնաժողովի նախագահ՝
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ս. Սողոմոնյան

Անդամներ՝
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետ Տ. Առաքելյան

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Ի. Իսրաելյան

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետ Ա. Ավագյան

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետ Դ. Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների գործակալ՝ Ն. Մկրտչյան

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված՝ բենզին, ռեգուլյար – 4267 218.9 (չորս միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր տասնութ և ինը) ՀՀ դրամ:

1. ՎԱԱՏ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման և գնահատման մասին

1.1 Հայտերը բացվել են 2019 թվականի սեպտեմբերի 6-ին էլեկտրոնային եղանակով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները:

N	Մասնակիցների անվանումները	Էլեկտրոնային փոստի հասցե

1	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	«tendercps@gmail.com»
2	«Ֆլեշ» ՍՊԸ	flashltdtender@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

4.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

Չ/Բ	Անվանում	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ		«Ֆլեշ» ՍՊԸ	
		Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին	Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Բենզին, ռեգուլյար	3 310 000	3 972 000	3 392 750	4 071 300

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

5. «ՎԱՍՏ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով մրցույթի նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

5.1 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

Չ/Բ	Մասնակիցների զբաղեցրած տեղը	Մասնակիցների անվանումը
1	1	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
	2	«Ֆլեշ» ՍՊԸ

5.2 Ոչ ավտոմատ եղանակով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին 06.09.2019թ. ծանուցել՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկված ապրանքի անվանումը, ապրանքային նշանը,

արտադրողի անվանումը, ծագման երկիրը ու տեխնիկական բնութագիրը/ապրանքի ամբողջական նկարագիրը/:

5.3 Էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 06.09.2019թ. հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>

6.1 «ՎԱԱՏ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել, 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման արդյունքը ստանալուն հաջորդ աշխատանքային օրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 հասցեում ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ս. Սողոմոնյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Տ. Առաքելյան	ԳՊ/ԳԱ	
	Ի. Իսրաելյան	ԳՊ/ԳԱ	
	Ա. Ավագյան	ԳՊ/ԲԱ	
	Դ. Ստեփանյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ն. Մկրտչյան	ԳՊ/ՄՀմ	